## ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

# ՆՐԱՆ ԵՐԿԱՐ ԿՀԻՇԵՆ



Ռոմա Ռազմիկի Քալաշյանը ծնվել է 1975-ի մայիսին, Գորիսի շրջանի Ձեղ գյուղում: Ծնողների հետ տեղափոխվելով Արարատ՝ նա չորս տարի սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, իսկ 1984-ից նաեւ շրջկենտրոնի երաժշտական դպրոցի ակորդեոնի դասարանում: 1986թ. կրթությունը շարունակել է Երեւանի թիվ 181 դպրոցում: 1992-ին, միջնակարգն ավարտելուց հետո, աշխատանքի է անցել «Մարիաննա» կոոպերատիվում:

Կենսագրական այս ժլատ փաստերն իմաստավորվեցին մի կարեւոր իրադարձությամբ. 1993-ի մայիսի 23-ին Ռոման զորակոչվեց Հայոց Ազգային բանակ: Ծառայում էր Կապանում, պաշտպանում հայրենի Զանգեզուրի սահմանները: Բայց երբ արցախցիները սկսեցին թշնամու մահ ու կրակ տարածող հրետակետերի ոչնչացման գործողությունները, Ռոման համախոհների մի ջոկատով միացավ կամավորներին եւ մասնակցեց Հորադիզի մարտերին: Այստեղ էլ 1994թ. հունվարի 5-ին, քաջի մահով ընկավ: Անկատար մնացին հայրենիքը լրիվ ազատագրված տեսնելու, բարձրագույն կրթություն ստանալու, երաժշտության բնագավառում ինքնանալու երազանքները: Մնացին սոսկ մեծարանքի ու ափսոսանքի խոսքերը, որոնցով նրան ճանաչողները՝ համադասարանցիները, գործընկերները, հարազատները պատմում են նրա մասին:

Ռոմա Քալաշյանը կենսախինդ բնավորություն ուներ, հետաքրքրասեր էր, մարտնչող եւ գլխավորը՝ հայրենիքի նվիրյալ, որին էլ զոհաբերեց իր 19-ամյա կյանքը:

ՌՈԶԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ